Արձանագրություն N 1

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 12-ի, ժամը 15.00-ի նիստի

Օրակարգ

1. Բացման խոսք, Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման նպատակը և խնդիրները
2. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի ներկայացում
3. Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից առաջիկայում իրականացվելիք ծրագրերը
4. Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կանոնակարգումը
5. Ելույթներ, մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ *(հանձնաժողովի նախագահ)*
Տ. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Մ. Գալստյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի եվրահնտեգրման վարչության իրավական բարեփոխումների բաժնի պետ գլխավոր մասնագետ /փոխարինող/
Ց. Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատա-կազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վերահսկողության բաժնի պետ
Կ. Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ /փոխարինող/
Գ. Ավագյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և

	մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ
Մ. Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական քաղաքականության և ռազմավարության մշակման վարչության վիճակագրության և վերլուծությունների բաժնի առաջատար մասնագետ
Մ. Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ
Ջ. Սարգիզովա	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի ղեկավար
Ի.Տեր-Մինասյան	Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար
Ա. Հովհաննիսյան	ՄԱԿԶԾ-ի ժողովրդավարական կառավարման և գենդերային հարցերով պատասխանատու
Ք. Ռոչելլա	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի տեղակալ /փոխարինող/
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական
Ս. Գրիգորյան	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանական բաժնի աշխատող
Վ. Ատտրյան	'Մարդկային զարգացման միջազգային կենտրոն' հասարակական կազմակերպության փորձագետ
Գ.Արմաղանովա	'Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա' հասարակական կազմակերպության փոխնախագահ
Ս.Վարդանյան	'Կանանց իրավունքների կենտրոն' հասարակական կազմակերպության նախագահ
Է. Վիրապյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի, կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ /հրավիրյալ/
Ն. Ալթունյան	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչ /հրավիրյալ/
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ *(հանձնաժողովի քարտուղար)*

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ *Ֆ. Բերիկյանը* և ողջունեց

մասնակիցներին անդրանիկ նիստի կապակցությամբ: Նա ներկայացրեց հանձնաժողովի ստեղծման նպատակը և խնդիրները, նշելով, որ հանձնաժողովի ստեղծումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի <<Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը և դրա միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> N645-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների և <<Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի /1995թ./ հանձնարարականների, ինչպես նաև <<Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացման Հայաստանի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումների կատարման անհրաժեշտությամբ: Ստեղծված մարմնի խնդիրն է իրականացնել հանրապետությունում գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգումը, տեղեկատվության փոխանակումը, միջազգային կազմակերպությունների կողմից հանրապետությունում այս նպատակի համար ներդրվող միջոցների նպատակային ուղղորդումը, ընդդեմ գենդերային բռնության Ազգային ծրագրի մշակումը և իրականացումը:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ *Ջ. Սարգիզովան* և համառոտ ներկայացրեց տեղեկատվություն 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների՝ համահանրապետական հետազոտության, իրազեկության բարձրացման, օրենսդրության վերլուծության և տարածաշրջանային համագործակցության մասին:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ *Ա. Թանաշյանը:* Նա ներկայացրեց գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջազգային պարտավորությունները, ՀՀ Կառավարության կողմից ա/թ. փետրվարին հաստատված <<Գենդերային քաղաքականության հայեցակարգով>> նախատեսված ռազմավարական ուղղությունները և վերոհիշյալով պայմանավորված՝ Հայաստանում գենդերային բռնության վերացման 2011-2014թթ. ազգային ծրագրի մշակման անհրաժեշտությունը:

Օրակարգի չորրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ *Լ. Ղազարյանը:* Նա անդրադարձավ հանձնաժողովի աշխատանքների կանոնակարգման, հանդիպումների ժամկետների կարգավորման և աշխատանքային խմբերի ստեղծման հարցերին, նշելով, որ նպատակահարմար է առաջիկայում ստեղծել երկու աշխատանքային խումբ, որոնց կողմից կմշակվեն հանձնաժողովի կանոնակարգի և ազգային ծրագրի նախագծերը:

Ելույթ ունեցան և մտքերի փոխանակմամբ հանդես եկան.

Կ.Սուջյանը ողջունելով հանձնաժողովի ստեղծումը տեղեկացրեց, որ մայիսի սկզբին Ժնևում ՀՀ Կառավարական պատվիրակությունը ներկայացրել է <<Մարդու իրավունքների մասին>> հերթական զեկույցը և հանձնաժողովի հարցերի և

առաջարկների մեծ մասն ուղված են եղել գենդերային հավասարության և բռնության կանխարգելման խնդիրներին: Նա նշեց, որ առաջիկայում իրականացվելիք քայլերը պետք է համահունչ լինեն վերոհիշյալ առաջարկներին:

Մ. Կարապետյանը ևս կարևորեց հանձնաժողովի ստեղծումը, նշելով, որ <<Կանանց իրավունքների կենտրոն>> ՀԿ-ի նախաձեռնությամբ փորձագիտական/միջգերատեսչական խմբի կողմից մշակվել է <<Ընտանեկան բռնության մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, որում նախատեսված է համակարգող խորհրդի ստեղծումը, ինչը համահունչ է ստեղծված հանձնաժողովի խնդիրներին: Միևնույն ժամանակ խնդրեց պարզաբանել վերոհիշյալ նախագծի ներկայացման հետ կապված քայլերը: Ի պատասխան դրան *Ա. Թանաշյանը* հայտնեց, որ նախագիծը կներկայացվի հանձնաժողովի քննարկմանը և նրա կողմից հավանություն ստանալուց հետո սահմանված կարգով կդրվի շրջանառության մեջ:

Ա. Հովհաննիսյանը մասնակիցներին տեղեկացրեց ՄԱԿԶ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համագործակցությամբ 2004-2008թթ. իրականացված ծրագրի, դրա շրջանակներում մշակված և ՀՀ Կառավարության կողմից հաստատված <<Գենդերային քաղաքականության հայեցակարգի>> մասին և առաջարկեց ընդլայնել հանձնաժողովի խնդիրները ընդհանուր գենդերային հարցերը համակարգելու ուղղությամբ: Ներկայացված առաջարկի կապակցությամբ *Ֆ.Բերիկյանը* պատասխանեց, որ <<Գենդերային քաղաքականության հայեցակարգով>> սահմանված են ռազմավարական ուղղությունները և դրանցից բխող միջոցառումների մշակման կապակցությամբ ՀՀ Կառավարության կողմից ձեռնարկվել են քայլեր՝ հանձնարարական է ուղարկվել բոլոր շահագրգիռ գերատեսչություններին և այդ ուղղությամբ աշխատանքներն արդեն ընթացքի մեջ: Բացի այդ, այս հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ վարչապետի 30մարտի 2010 թվականի N 213-Ա որոշմամբ՝ գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացման, տեղեկատվության հավաքագրման և փոխանակման մեխանիզմների մշակման, ինչպես նաև Ընդդեմ գենդերային բռնության՝ ազգային ծրագրի մշակման նպատակով:

Տ. Հարությունյանը անդրադարձավ հանձնաժողովի կազմակերպական, մասնավորապես, նիստերի հրավիրման պարբերականության և հետագա քննարկումների ընթացքում բարձրացվող հարցերի ներկայացման խնդիրներին, նշելով կանոնակարգի մշակման անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ նա առաջարկեց մշակել կանոնակարգի նախագիծ, ինչպես նաև հանձնաժողովի անդամ՝ տեղական և միջազգային կազմակերպություններին ներկայացնել իրենց կողմից իրականացվող և առաջիկա ծրագրերի, ինչպես նաև առկա խոչընդոտների մասին հակիրճ տեղեկատվություն:

Ա.Թանաշյանն առաջարկեց հանձնաժողովի աշխատանքերը արդյունավետ կազմակերպելու նպատակով, այսուհետ նիստերին վերաբերվող գրագրությունը՝ նամակները, հրավերները, օրակարգերը, նիստերի արձանագրություններ, այլ փաստաթղթերը և անհրաժեշտ նյութերը, փոխանակել էլեկտրոնային փոստի միջոցով:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ստեղծել աշխատանքային երկու խմբեր, որոնք կմշակեն հանձնաժողովի կանոնակարգի և Հայաստանում գենդերային բռնության վերացման 2011-2014թթ. ազգային ծրագրի նախագծերը,
2. հանձնաժողովի անդամ տեղական և միջազգային կազմակերպություններին՝ 10-օրյա ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել իրենց կողմից իրականացվող և առաջիկա ծրագրերի, ինչպես նաև առկա խոչընդոտների մասին հակիրճ տեղեկատվություն,
3. նիստերին վերբերվող գրագրությունն իրականացնել էլեկտրոնային փոստի միջոցով:
4. հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 1 ամիս անց:

Հանձնաժողովի նախագահ՝ Ֆ. Բերիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թանաշյան